

Հայաստանի Հանրապետության Գիտությունների
Ազգային Ակադեմիայի պատմության ինստիտուտ

ԹԱԳՐԻ ԽՐԱԿՈՒՆԵՈՎ

Մանուչան Արտյով Սպիրիդոնի

Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918թ.
ի ճընապաշտպանությունը

Մասնագիտությունը - Հայոց պատմություն է. 00.01

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցնան ատենախոսության

M

Սեղմագիր

Երևան-1996

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի Հայոց
պատմության ամբիոնում:

Գիտական դեկան՝

ՀՀԱԱ ակադեմիկոս Լ. Ա. ԽՈՒՐՃՈՒԴՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

1. ՊԱՏՄ.ԳԻԾ. ԴՊԿԾՈՐ, ՊՐՈՖ. Է.Ա.ԶՈՀՐԱՅՔՅԱՆ

2. ՊԱՏՄ.ԳԻԾ. ԹԵՂԱՋՈՒՆԻ Ա.ՀԱԿՈԲՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Արովյանի անվան Երևանի պետական
մանկավարժական ինստիտուտի Հայոց պատմության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու «*25 ամիսից*»
12 օդիք - 1996թ., ժամը *13:00* ին, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
պատմական գիտությունների բեկնածուի գիտական աստիճան շնորհող 004
մասնագիտական խորհրդի նիստում / 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի
փողոց, 24գ/:

Առենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության
ինստիտուտի գիտական կարինետում:

Սեղմագիրը առավել է «*25 ամիսից*» 1996թ.

Մասնագիտական խորհրդի
գիտական բարտուղար, պատմական
գիտությունների բեկնածու *Հ. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հիմնահարցի արդիականությունը և հրատապությունը՝ Արցախայինության
ազգային - ազատագրական պայքարի ժամանակաշրջանում մեր
ուսումնակրությունը կարևորվեց իր արդիականությամբ, որպես հայ ժողովրդի
ազգային - ազատագրական պայքարի պատմության հերոսական էջերից մեկը:

Ախալցխայի հայության հերոսամարտի պատմությունը կարող է խսկական
հերոսության, կազմակերպվածության, համախմբվածության օրինակ ծառայել այս
օրվա և վաղվա սերումների համար: Այդ հերոսամարտի օրերին վեց ամիս
շրջափակման մեջ գտնվող բնակչության բռնոր խավերն ու կուսակցությունները
մոռացած իրենց միջև եղած տարածանությունները հակասությունները և ներ
շահերը, դարձել են մեջ բռնումց: Ընդհանուրի ազգի շահերը նրանց համար
ամեն ինչից քարար էին, և նրանց հաղթանակի առեալատչյան հենց այս վեհ
գողափարն էր:

Ինձնապաշտպանության ղեկավարները՝ Ախալցխա քաղաքի բաղադրություն,
Ախալցխայի գավառի Հայկական ազգային խորհրդի նախագահ Զորի Զորյանի
գլխավորությամբ, լրիվությամբ անտեսելով՝ իրենց անձնականը, ազնիվ ու
արդարացի գործելակերպով հավատ էին ներշնչում ժողովրդին, և որպես
իսկական պետական մտածողությամբ օժտված այրեր, իրենց հետևից տանում
նրան դեպի հաղթանակմեր:

Այս նույնը չի կարելի ասել Ախալցխաքի գավառի մասին, որտեղ, թեև
հայությունը իր բանակով մոտ երեք անգամ գերազանցում էր Ախալցխայի
գավառի հայությանը, բայց վատ կազմակերպվածության ու որոշ ղեկավարների
վախկութության, անճարակության, ապաշնչության ու անհեռատեսության
հետեւամբով վերջնական հաղթանակի չկարողացավ հասնել և ցավալիորեն
պարտվեց, թեև մի շարք փայլուն հաղթանակներ տարավ գավառի առանձին
մասերում: Ժողովուրդը խուճապահար դիմեց փախուստի, և Բակուրիանի
անտառներում ու Տալկայում / Վրաստանի իշխանությունները թաւլ չտվեցին
գաղթականներին թափանցել երկրի խորենը / առվից ու համարակից մահացան
բառապուն հազար հայեր / գավառի բնակչության կեսը /:

Վրաստանի կառավարությունը, որը գրեթ ոչ մի օգնություն չէր
ցուցաբերել Ախալցխաքի ինձնապաշտպանությանը, ավելին, իր գործելակերպով
նապատել էր տասնյակ հազարավոր հայերի ոչնչացմանը, Թուրքիայի
պարտությունից հետո, օգովելով նապատակոր պայմաններից, 1918թ. դեկտեմբերի
5-ին Ախալցխաքի գավառը բռնակցեց Վրաստանին:

Ատենախոսության թեմայց կարելի է դասեր ժաղել՝ հաշվի առնելով այն դրական, ճիշտ ժայլերը, որ կատարվել են Ախալցիայի գավառում 1918թ. իմբնապաշտպանության օրերին, և խոսափել Ախալցիայի գավառում թույլ տված սինալներից:

Ուսումնասիրության նախակը և խնդիրները. Համակողմանիորեն ներկայացնել 1918թ. Ախալցիայի և Ախալցիայի գավառների իմբնապաշտպանության պատությունը: Այդ նպատակով, հնարավորության սահմաններում ցույց տալ իմբնապաշտպանության դասերը, որոնք հայ ժողորդի այսօրվա և վաղի սերունդների համար կունեան ուսուցողական կարևոր նշանակություն:

Ցույց տալ, որ հայ ժողովուրդը կամովին չի «մորքվել», ինչպես երբեմն կարծում են հատկապես անտեղյակ օտարները, այլ ամեն ինչ արել է, անգամ անկարելին իր գոյությունը պաշտպանելու համար: Սարդարապատի հետ կարելի է համեմատել Ախալցիայի հերոսամարտը: «Տաշարար մարտնչել է նաև Ախալցիայի հայությունը»:

Ուսումնասիրության գիտական նորույթը. մեր ասենախոսության/«Ախալցիայի և Ախալցիայի գավառների 1918թ. իմբնապաշտպանությունը»/ թեման համակողմանիորեն ուսումնասիրության առաջին փորձն է: Տասնյակ տարիներ Խորեգդային բռնադիրության պայմաններում հնարավոր չի եղել անդրադառնալ հայ ժողովորդի Մեծ եղեռնի, այդ բնացքում մղված իմբնապաշտպանական կոփների պատմությանը: Առաջի ևս այդ վերաբերում է Ախալցիայի և Ախալցիայի գավառների իմբնապաշտպանությանը և Զավախի հայության 50%-ի ոչնչացմանը:

Հետազոտության մեթոդանությունը. ատենախոսությունը շարադրել ենք ցուցաբեկով պատմանանշանական և բնեական, վերլուծական մոտեցում: Հետազոտությունը կատարելիս հենցի ենք քազմաքիչ սկզբանդրյութերի, իմբնապաշտպանության կոփների մասնակիցների և ժամանակակիցների վկայությունների վրա: Աշխատել ենք օբյեկտիվորեն ներկայացնել պատմական ժամանակաշրջանը ցույց տալ այնպես, ինչպես որ կա՛ առանց գունազարդումների: Նկատի ունենալով թեմայի դաստիարակչական նշանակությունը, գտնել ենք առանձնապես շեշտել իմբնապաշտպանական կոփներում ժողովորդի և առանձին անհատների ցուցաբերած հերոսականության ու անձնութացության փաստերը: Ցույց տալով իմբնապաշտպանության օրինակելի կողմերը, միաժամանակ բացահայտել ենք այն սխալներն ու թերությունները, որոնք թույլ են տրվել այդ ուրիշ թերի:

Կ ա տ ա ր ե լ

Ենք համեմատություններ, ընդհանրացումներ, որոնք ավելի իրատեսորեն են ներկայացնում հարց իր ամրազության մեջ:

Ուսումնասիրության փորձանենությունը. խրուշչևյան ազատական հովերի ազդեցությամբ նրանում հայ ժողովուրդը նշեց նղեռնի 50-ամյակը, որի ազդեցությամբ Զավախի Սարբա գյուղում 1968թ. գարմանը նշվեց գյուղի և Ախալցիայի գավառի իմբնապաշտպանության 50-ամյակը: Համբիսությամբ ներկա էին նաև գյուղի 1918թ. իմբնապաշտպանության ղեկավար Հմայակ Խանոյանն ու իմբնապաշտպանության մի ժամի տասնյակ մասնակիցներ: Այստեղ տողերին հեղինակը կարգաց գեկուցում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը մեկ տասնյակից ավելի ծավալուն հաղվածների ձևով պապարվել է ամսագրերում ու թերթերում, ինչպես և հրատարակվել է որպես մենագրություն՝ 10000 տպագանակով, որից 7000-ը իրացվել է ՎՀ Ախալցիին, Ախալցիայի, Բոգդանովկայի/ Նինոծմինդա/, Ծալկայի շրջանների գրեթե բոլոր գյուղներում ու բաղադրական գաղափառներին: Մի շաբթ դպրոցներում այն օգտագործվում է պատմության գասաժամերին: Մի ժամի հարցուր օրինակ առաջի է Արցախի հերոսամարտի օրերին: 1000 օրինակ իրացվել է ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից:

Ատենախոսությունը նմանընթացի է Համալսարանի Հայոց պատմության ամբողջում, ՀՀ ԳԱԱ Հայաստանի Առաջին Համբապետության պատմության բաժնում:

Ուսումնասիրության պարզությունը և ուսումնասիրման պատմագրությունը/ հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը/ . ուսումնասիրությունը հիմնված է արխիվային այն փաստաթղթերի վրա, որոնք գտնվում են ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում/ֆ.222ց1., գ24, 1թ, թ.128-129; ֆ.222ց1, գ24 3-րդ, թ.444; ֆ.246, ցո. թ.25; ֆ.222, ց1, գ24 1թ, թ.79; ֆ.222, ց1, գ30, թ.1; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.75; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.72; ֆ.222, ց1, գ30, թ.1; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.77; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.444; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.76; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.80; ֆ.222, ց1, գ24, 1-ինթ, թ.266 և այլն /, ՎՀ Հռկուեմբերյան հեղափոխության նշանական արխիվում /Այս փաստաթղթերի/փանիթը՝ 28ց 28, 11ց, 151/ պատմենները գտնվում են ՎՀ Ախալցիին «Սամցինե-Զավախիթի պատմության բանագրանում», որոնք գրանցված են նոր համարներով՝ թոր 3428թ 142: Գ. 3428, թ. 130-131: Գ. 3428, թ.130 և 131: Գ. 3428, թ.110 և 132: Գ. 3428, թ. 134-135: Գ. 3428, թ. 137-138: Գ. 3428, թ.134 և 138 և այլն/, ՄՀ-ի հայկական մասնաբյուղի արխիվում և այլուր: Ազգյուրագիտական կարևոր նշանական ուսումնասիրության պատմության» պահպող ծրբանդ՝ Սիմոնյանի «Դեմքնեա-Զավախիթի պատմության» թեմին:

Էռոշագրությունը՝ վրացերեն, ձեռագիր վիճակում, որը հայերենից վրացերեն է բարգմաննել։ Ախալքալաքի գավառագիտական բանգարանի տնօրեն պ. Արսեն Կարապետյանը, և Զատարիա Դիդմամշվիլու օրագիրը՝ վրացերեն, ձեռագիր վիճակում։ Ախալքիթի «Սամցին-Զավախիթի պատմության թանգարանում» է պահպնիք նաև Հրաչյա Վարդանի Ղազազյանի /բոլշևիկ/ ուսուցչի գրած հուշերը /գործ հմք. 3835, թիրթ 7/ և ինչ բոլշևիկ Համազասպ Տիգրանի հնչիլյանի ուսուցչի գրած ինքնակենսագրությունը /գործ հմք. 3835, թիրթ 7/: Արանք ևս ժեռագիր վիճակում են։

Աշխատանիքի շարադրման համար աղյուրագիտական կարևոր նյութեր են ժաղի նաև ժամանակի մամուլից /1917-1918թ. Ախալցխայում լույս տեսած «Նարծում» թիրթը, «Մշակ», «Հորիզոն», «Արև»/Բագու/, «Լրաբեր»/Թիֆլիս/, «Աշխատանիքի դրոշակ», «Նոր եռիգոն», «Հառաջ», «Կավաչք շխմակ» և այլ թիրթեր/։

Աղյուրագիտական կարևոր արժեք են ներկայացնում նաև ծագումով Ախալցխացի Կ. Ղաֆարյանի հոդվածը, որը լույս է տեսել «Ախալցխայի 1917-1918թ. ինքնապաշտպանական կոփվները» վերնագրով, «Բանքեր Հայաստանի արխիվների» ամսագրում, 1988թ. հմք. 1/ և Մ. Ցակ. Վելիչանաչվիլու գիրքը /«Խիզարավրայի ուղեցույցը», հրատ. Մեցնիերա, Թիֆլիսի, 1974թ., վրացերեն/։

Աղյուրագիտական կարևոր նշանակություն են ունեցել նաև պաշտպանական կոփվների ակտիվ մասնակիցների և նրանց հարազաների, ժամանակակիցների բանակոր և գրավոր հուշերը, որոնք և մենք հավաքել ենք այսուհետով Ախալցիթի, Ախալքալաքի, Ասպիճանյի, Ադիգենի, Մալկայի ու Բոգդանովիայի շրջանների տասնյակ հայկական ու վրացական գյուղեր ու բաղադրեր։

Ասպիճանյի ճակատամարտը իր գլուխալույսում և լույսում գ. 1-ին և 2-րդ. Առաջ. գր., Մոսկվա, 1969թ./ գեղարվեստում մկարագրել է գրաքանակը

Ավելասնդր Քուշարծին։ Զավախում տեղի ունեցած այդ իրադարձությունները նա նկարագրում է ականատեսի աշխերով և նշգրառությամբ։

Ախալքալաքի 1918թ. ինքնապաշտպանության հարցին վերաբերող հռոված /«Ախալքալաքի տրագեդիան»/ է հրատարակել ծագումով Ախալքալաքի Գյումրուդո գյուղից Պողոս Աբելյանը՝ «Աշխատանիքի դրոշակ» թերթում /1918թ., հմք. 4 և 7/։

Զավախումի ինքնապաշտպանության մասին գեղարվեստորեն նկարագրել է Զավախումի մասնակի մարդկանը՝ իր «Ենթանիքի ենթանիքը» գրքում /հր. «Մարզուան Աշուա Նուրբեկյանը»/ իր «Անոնքի ենթանիքը» գրքում /հր. «Մարզուան Անդրբեկյանը», Թիֆլիսի, 1973թ./։ Հեղինակի կողմից բռնլ են տրված բազմարիվ պատմական անհշտություններ, անախրոնիզմներ, և գիրքը չունի պատմագիտական արժեք։

Օգտագործվել է հետևյալ գրականությունը.

1. Հ. Ա. Էփրեմյան, Բնաշխարհիկ բառարան, Հ. Ա., Վենետիկի:
2. Մ. Ցակ. Վելիչանաչվիլի, Խիզարավրայի ուղեցույցը, իր «Մեղմիերա», Թիֆլիսի, 1974թ./Վրացերեն/:
3. Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կոփվները, ԹԱ. հրատ., Եր., 1984թ.:
4. Հայ Ժողովրդի պատմություն, 4-րդ հատ., «Լույս» հրատ., Եր., 1970թ.:
5. Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունները, «Հայաստան» հրատ., Եր., 1991թ.:
6. Արքանան Կրետացի, Պատմություն, ԳԱ. հրատ., Եր., 1973թ.:
7. Հ. Գ. Թուրքյան, Սարդարապատի հերոսամարտը, Եր., 1965թ.:
8. Լեռ, Երկերի ժողովածու, 3-րդ. հատոր, գիրք 2-րդ., Եր., 1973թ.:
9. Լեռ, Երկերի ժողովածու, հա. 1-ին, Եր., 1966թ.:
10. Լեռ, Երկերի ժողովածու, հա. 2-րդ., Եր., 1967թ.:
11. Ե. Լալայան, Երկեր, հա. 1-ին, Եր., 1983թ.:
12. Ա. Օրբելյան, Այումիքի պատմությունը, Եր., 1986թ.:
13. Գ. Մ. Գրիգորյան, Այումիքը Օրբելյանների օրոք, Եր., 1981թ.:
14. ՀԱՀ, հա. 1-ին:
15. Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարեղյան, Հայաստանի հարակից շրջանների տեղամունքների բառարան, հա. 1-ին, Եր.:

16. Из истории иностранный интервенции в Армении в 1918г., /документы/, Ереван, 1970г. "
 17. С.С.Джикия, Пространный реестер Гюрджистанского вилаета, кн.2-ой, Тбилиси, 1941г.
 18. Александр Кутатели, Лицом к лицу, кн.1-ый и 2-ой, Сов.пис, Москва, 1969г.
 19. И. Х. Баграмян, Моя воспоминание, Ер., 1979г.
 20. Грант Аветисян, Брест-Литовск: как были оттаргнуты Турцией Карс, Ардаган, и Батум; Ереван 1994г.
 21. Հ. Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժք պարի պատմությունը, Եր., 1980թ.:

Անսումնափրության ծավալը և կառուցվածքը. ուսումնափրությունը բաղկացած է 203 էջից: Այն ունի երկու գլուխ / 1-ին գլուխ՝ «Ախալցխայի 1918թ. հերոսամարտը», 2-րդ գլուխ՝ «Ախալցխայի 1918թ. ինմանապատճենությունը»/:

- ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Ախալցխայի 1918թ. հերասմարտը. 1917թ. նոյեմբերի 15-ին կազմակերպվեց Անդրկովկասյան կոմիտարիատը, և հականարիդային բլուրը, փաստորեն, Անդրկովկասը անշատեց Խորհրդային Ռուսաստանից: Երկրամասում ստեղծվեց ծանր ու բարդ իրավիճակ: Ազգայնական կռւակցությունների ներհակ գործողությունների հետևանքով ազգամիջյան հարաբերությունները իիստ սունեցին:

Արտակարգ ծանրացավ վրացիների, հատկապես հայերի վրանակը, որը ուղարկած բանակը թողեց կովկայան ռազմամակատի հսկայական գիծը և հեռացավ:

Ճիշտ է, Թուրքիայի հետ կմէկվել եր նրգնկայի զինադադարը, բայց այս ոչ մի երաշխիք չէր տալիս, որ Թուրքիան չի իրականացնի իր փայփայած ծրագրերը՝ պամբուրքիզմը, որի ճանապարհին ընկած էին Հայաստանն ու Վրաստանը։ Նա այդ նպատակով ամկայումառյուն ու լարգանություն եր ստեղծում Անդրկովկասում՝ հայերի և վրացիների դեմ հանելով տեղական բուրք քննակչությար որպես «հիմքերը որդ զորայուն»։ Նա այդ իրականացնում եր «Մուսավարք» կաւակցության պարագալութերի՝ Թոփիբաշկի, Ազակի, Զաֆարովի, Խան-խոյսկու, Ղավանշիրի, Սուլեյմանովի, զանազան բեկերի և իր այլ գործակաների միջոցով։ Թուրքիայի կողմից այդ ուղղությամբ կատարված առաջին հայերից մեկը նղակ Ախացիոյի գավառի /Մեսիներ/ բրգաւթյանը ունի հանելը ընդդեմ հայերի ու վրացիների։ Այս մասին շատ դիպուկ է ասված Մ. Շահ. Վելչանաշվիլու գրեում /«Խիզաքավարքի ուղեցույցը»/, որտեղ կարդում ենք ն. Վելչանաշվիլու հետևյալ հուշերը. «Թուրքերի բանակի հրամանատար Վենիք փաշան հրամայում է Ախացիոյների Սարքան բեկին, որ տեղական մահմետականներից ավագակախմբերի կազմի՝ տեղական վրացիներին ոչնչացնելու համար... Այդ սև օրերը հիշելիս մարմինս ողում է... Անհամանները ոչ միայն ուղղում էին մեր այս անյօւնը, այև ամբող Վրաստանը¹: Իսկ «Մշակը» լգուած է, «Ծրջապատող բուրքերը գրեթե ուժի օգնությամբ են զինվում, խմբվում, այն եւ վերսից /Պոյսից/ եկած հրամանի, եկած բեգերի շնորհիվ»²:

Ախալցիայի գավառի թուրքերը բեգերի գիշավորությամբ 1917թ. դեկտեմբերի 27-ին 15 հազար զինված մարդկանցով համկարծակի հարձակվեցին Ախալցիա քաղաքի վրա և պաշարեցին այս: Թուրքերի

¹ Ա. Յանիս, «Մեծանունիքի մասին, Արդարավորայի ուղեցույցը», Հր. «Մեցնիերա», Թբիլիսի, 1974թ. /վրացերեն/:

2. ՏՄՀանձ, Զ-ր մարտի 1918թ.

Ապարագլուխմեր Օմար Էֆենդիս և Սարգսն թեզ Աբարորեգովը քաղաքի ղեկավարներից պահանջեցին իրենց հաճանել քաղաքը, բերդը, քաղաքի հեռացող ոռուական գորամասի գնճը ու գինամթերքը՝ որպես խկական «ժառանգորդների»: Ինչպես հայտարարում է Օմար Էֆենդին, իրենք՝ բուրքերը, քաղաքի բնակչության, առանձնապես հայերի նկատմամբ չունեն որևէ առանձ, եթե լինի որևէ պրորիետ, ապա դա նապահ կլինի վրացիների հետ... Որ իրենք ուզում են Ախալցխայի գավառում ստեղծել բուրքական կամուն/³ «Ծարժում», Ախալցխա, 1918թ. Առ. 1: ՀԽՍՀ ՊՊԿՍ. Ֆ. 222, գ.1, գ.24 և. թ. 79/ : Ախալցխա քաղաքի բնակչությունը / 1918թ.՝ 20 հազար/, որի 82%-ը հայեր են, ուրիշ կանգնեց զննը ձեռքին: Երիտասարդ քաղաքավուն Զորի Չորյանի գլխավորությամբ արգորեն կազմակերպվեց «Քաղաքի ինքնապահության գվարդիա», և հմուտ ու փորձված հրամանաւորների ղեկավարությանը այն գրավեց պաշտպանական դիրքեր քաղաքի մերձակայրում... .

Անդրեսովիասյան կոմիսարիատի կողմից ուղարկված ներկայացուցիչների Կարտսաձեխ, Ղազազյանի, Հայոց ազգային խորհրդի անդամ Բեզզարյանի և բուրքական/ադրբենց. / ազգային խորհրդի անդամ Պետրոսյի միջնորդությամբ դեկտեմբերի 29-ին քաղաքի երեօրյա պաշտումը դադարեցվեց: Սակայն դա հարաբերական դադար էր: 1918թ. հունվարին բուրքերն ել ավելի ուժեղացրեցին Ախալցխայի շրջափակումը՝ փակելով Աղոյուրի մոտ Քործոնի տանող ճանապարհը, Ասպինձայի մոտ՝ Ախալքալաք տանող ճանապարհը: Այդ կետերում բուրքերը խուզարկում էին անցորդներին ու քայլանում, իլուս էին տուն վերադառնող ոռու, հայ, վրացի գինվորների գերը: Նրանք հարձակվում էին վրացական և հայկական գյուղերի վրա, քայլանում՝ քշում սենատուները, ինչպես և այդ հարձակումները ուղեկցվում էին բռնարարություններով ու սպանություններով: Կտրել էին և հեռախոսային կապը թիֆլիսի և այլ քաղաքների հետ:

Ախալցխա քաղաքի և շրջապատի հայ և վրացի բնակչությունը ստիպված էր դիմելու ինքնապահության:

Գավառի 16 հայկական գյուղերից 15-ը / Զաջարակ, Միրա, Մուղրուր, Սուֆլիս, Սագել, Լուլախս, Խակ, Օրալ, Փոքր Պամաճ, Մեծ Պամաճ, Մինուրան, Արաթիս, Ջուղա, Մղալթերիլա, Նիոյիրեր/ գտնվում էին անմիջապես քաղաքի շրջակայրում, իսկ Դամալա գյուղը գտնվում էր Ախալքալաքի գավառի սահմանների մոտ և շրջապատված էր բուրքական 20 գյուղերով, այն անառիկ էր ու անմատչելի՝ շնորհիվ կազմակերպված

³«Ծարժում», Ախալցխա, 1918թ. Առ. 1: ՀԽՍՀ ՊՊԿՍ. Ֆ. 222, գ.1, գ.24 և. թ. 79/ :

ներուական ինքնապահութանույան: Քաղաքին համեմատաբար մոտ էին գտնվում վրացական 10 գյուղեր/Ունեկ, Արալ, Վալե, Անդրիածնինդա, Ղրե, Ղուրաբեր, Միքելմինդա և այլն/, իսկ վրացական գյուղերի մեջ մասը հեռու էին քաղաքից և շրջապատված էին բուրքական գյուղերով:

Քաղաքի շրջակայի վերոհիշյալ գյուղերը քաղաքի հետ սիամից գտնվում էին շրջապատման օդակի մեջ: Յորսի հետ կապը հասարյա ամբողջովին կորպած էր...

Ինչպես գրում է Երվանդ Սիմոնյան իր հուշերում՝ պաշարվածները ծվարել են 150-170 քառ. կմ. տարածության վրա:

Քաղաքում հունվարի 27-ին ստեղծվեց Հայոց ագգային խորհուրդ՝ Զորի Չորյանի գլխավորությամբ, իսկ 28-ին հիմնադրվեց նայկական գումարտակ՝ փոխգործակին Հառուցովի հրամանաւորությամբ:

Բացի կանոնավոր գործից, կազմվեցին նաև թաղային խմբեր/գվարդիա/: Ջիմված խմբը էին ստեղծվում նաև գյուղերում: Քաղաք բերվեց վրացական կարմիր գվարդիան... Ինչպես քաղաքի շրջապատում, պահանջել շրջապատման օդակի մաս գտնվող նայ-վրացական գյուղերի մերձակայրում պաշտպանական դիրքեր, քարձունքների վրա ու բերդում տեղադրվեցին թնդանությունը: Պաշտպաններն ունենին բավարար թագավորությունը: Փամփուտների պակասը լրացվում էր գիճագործ հրացաններ ու գնդացիրներ: Փամփուտները սպառական կարի Շիֆթալարյան եղբայրների շանթերով: Վերջիններս սովորական կարի մերժմաները դարձել էին փամփուտ արտադրող մերժմաննու ոռոնց վրա մեծ հմտությամբ աշխատում էին նաև կանայք ու աղջիկները:

Բոլոր պահակակենները, գյուղերը իրար և քաղաքի հետ կապված էին հեռախոսով: Անշաբ խելացի էին կամաներպատ պահեմավորման և բուժման գործերը: Չորրում տիրում էր օրինակելի կարգապահություն: Բոլոր իրամատերում կանոնավոր ենթապահ պահակներ էին կամգմեցվում:

Ախալքալաքի և Ախալցխայի ուղամաճակատի հրամանաւոր, գեներալ Արշականին հիացած էր քաղաքի ինքնապահության կազմակերպված ությամբ:

Վտանգի հենց առաջին օրերից գավառում տիրում էր համընդհանուր խանդավառություն, մարտական ու քաղաքական քարքը ողի: Ցուրացանչուն ու ինցինապահությունը համարում էր իր հիմնական գործն ու նպատակը: Ան թե ինչպես է իր հուշերում Ակարագրում առ օրերի համաշոռովրդական հեռուսական ողու մասին Երվանդ Սիմոնյան «Մարտը» ու կամայը իրենց

Գնդական Սիմոնյան, «Հուսակը և դաշտը» հանալու, ուղարկում:

որդին ըստի ու ամուսնութերին մարտի էին ուղարկում այնպես, կարծու տոնախմբության համես լինի, շատ անգամ տանից քերում էին իրենց որդու կամ ամուսնու հրացանը ու փամփշտակալները, որպեսզի դրանք վերցներու համար զինվորը ժամանակ չկորցնի, և նոց գործի տեղից՝ այսուց, արտից, արթեստանոցից մնենի մասուառաւու...»⁵

Ի Արմապաշտպանությունը բոլորի համար դարձել է ու Եուրոպ, գաղափար: Ամեն ոք՝ Վորքից մեծը, տղամարդ, թե կին, անվճացող Եվիրված էր զուամսատին:

Այս վեճ գործում դժվար է որևէ մակին ճախապատվորուն տալը, սակայն չի կարելի շառանձնացնել Ախալցխայի քաղաքագլուխ 31-32- ամյա Չորի Չորյանի անփոխարինելի դերը /նա այդ պաշտոնում աշխատեց 1917թ. նոյեմբերից մինչև 1921թ. գարունը/: Իր այդ դժվարին ու քարդ գործունեության ընթացքում նա ցուց տվեց և ուազմական, և կազմակերպական, և դիվանագիտական կատարյալ հմտությունները: Նա իր բռնած դիրքով ու տակտով բոլոր ժողովորդների հերկայացուցիչների հետ կարողանում էր գտնել ընդհանուր լնգու՛ ելակետ ունենալով ընդհանուրի շահերը: Եվ նա այդպես էլ մնաց ժողովրդի հետ՝ կյանքը Վտանգի տակ դնելով: Նա Թիֆլիսնցի էր և կարող էր լինել Ախալցխան: Սակայն շընտրեց այդ հեշտ ճանապարհը: Եթե նա լրեն և մնաւմար, ապա գավառի հայերի /անշուշն/ նաև վրացիների /գաղթ անհուսահետի նիւթեն:

Թուրքական զորքերը ուխտադրժորեն շարժվում էին դապի Անդրկովկաս: Ստեղծվում էին հայկական ու վրացական նոր զններ՝ թշնամուն կասեցնելու համար: Թուրքական իշխանությունները, որպեսզի կանչեն հայկական ու վրացական բանակների հզորացումը, նրանց թիկունքում ուրիշ էին հանձն Գանձակի, Երևանի և Անդրկովկասի այլ շրջանների թուրքերին, որոնք մեծ սպասելիքներով ու ակնկալիքներով էին սպասում թուրքական զորքերի մուտքին Անդրկովկաս...

Նրանք բազմիցս դիմում էին մուրքիայի կառավարությանը՝ իրենց օսմանյան կայսրության մեջ ընդունելու համար: Օրինակ, «Մշակում» կարդում ենք նադորդագրություն այն մասին, որ Գանձակի և Շամախու բուրքերը Բարում են ուղարկել սատվիրակություն՝ «Մուսավար» կուսակցության հայտնի անդամ թօթիկ Սոլթանովի գլխավորությամբ՝ միջնորդելու համար՝ ընդունել իրենց օսմանյան պետության կազմի մեջ:⁶

Հետ չէին մնում նաև Ախալցխայի թուրքերը, որոնք թուրք-օսմանյան մեծաքանակ զորքերի հաջողություններից էլ ավելի էին կատարում համակված անպատճենիության զգացումով։ Դրա վառ ապացույցն է Ածղորի դեպքը, որը տեղի ունեցավ մարտի 6-ին։

Գեներալ Արշակունյացի շամբերով ուղարկած գործողությունները
դադարեցվեցին: Մարտի 13-ին տեղի ունեցավ Ազորիք ամսեղ գոհերի
բարոյն, ոռոնց մեջում էր քաջարի գիւղոր Աղասի Կորկուտյանը:

Հուդական պուրիմը Անրիկա Էին գեներալ Արշանձին իր շտաբով,
քաղաքային Վարչության կազմը՝ Զ. Չորյանի գլխավորությամբ, հայոց, Վրաց և
ուսուաց ազգային խորհուրդները, ինքնապաշտպանության հակական
գվարդիան, Վրացական Կարմիր գվարդիան և այլ գործադրերը հնացես և
ուղարկեց որու ոճակցությունը:

Այս օրերին թուրքերին, քաղաքալում Զ. Զորյանի կարգադրույամբ, պահում էին անվաս տեղում հատուկ նսկողության տակ, որպեսզի երանց հետ հաշվենարդար չտեսնեն Ածողութի անմեղ զոհերի վրեմք լուծելու համար: Այս թուրքերը հետո փոխանակվեցին Ածողութի և Արաւոտումանի գեղված ճայերի և վրացիների հետ:

Դրությունը գավառում էլ ապելի եր սրբության Անդրկովկասպան Սայսի շար կարողանում ազդել գավառի ժուրցերի Վրա, որոնք օրբտորէ դատում էին ապելի սահմանաձակ։ Կորություն էին քաղաքի շուրջ, հարձակվում էին հայկական և

Տերվանդ Սիմոնյան, «Դեմքի և դեպքե», ձեռագիր, Վրացերեն
ծ «Մշակ», 1918թ. հնը.89:

Վրացական գյուղերի վրա: Անրավել, Անդա, Արջուա գյուղերի թուրքերը համախակի ասպատակության էին և ներարկում վրացական Անդրեծմինդա, Ունտ, Վալե, Շորարեթ և Զվելի գյուղերը: Ապրիլի կեսերին քաղաք ժամանած գետերը Մանակը /Մարաշվիլի/ դիմեց կտրուկ քաղերի վրացական գյուղերի բնակչության փրկության հասար:

Նա հայկանան շտարի համաձայնությամբ, հայկանան գումարտակը վրացական գումարտակի հետ միասին, շտարս-կարիտատ Կորօնի ընդհանուր հրամանատարությամբ, երկու թնդանոթով ուղարկեց վերոնիշյալ շրջանները: Զնյած մառախչապատ եղանակին, հայ-վրացական գորքերը կոտրեցին թուրքերի համար դիմադրությունը, և այրվեց Անդա գյուղը: Այդ կովում հեռուս մահով զոհվեցին շտարս-կարիտատ Արմենակ Մարայտարյանց և գիմնազիայի 5-րդ դասարանի սան Գարեգին Մուրադյանը: Մանավեցին նաև 4 վրացիներ, վիրավորվեցին 12 հայ, 6 վրացի և մեկ վրացական հրեա /7/:

Հիշարժան է նաև Դիպակ սառի ճակատամարտը: Ապրիլի 23-ին 200 թուրք հետևակայինները ու հեծյալներ շարժվում են դեպի Օրալ և Սազել հայեական գյուղերը: Նրանց դեմ դուրս են գայիս այդ գյուղերից 170 կտրիճներ և Դիպակ սարի վրա Օրալի Խառորդ յայլայի սուս սկսվում է մի ամեղ ճակատամարտ որի ընթացքում հայ գյուղացիները ռուրեղուն ստիպում են նահանջել ունի Դիպակ, որտեղից սև քշում են 5-նվերստ հեռու: Զախշախաված թուրքերը տալիս են 30 սպանված և 60 վիրավոր/տվյալները թուրքերի վեայությամբ և, որովհետև վիրավորներին ու սպանվածներին նահանջելիս իրենց հետ տանում էին /, որոնց քվում նախկին ստրաֆնին քորդ Ծառուն, որը իր հրանեմ էր տարել հարեան վրացական գյուղերից բազմաթիվ գեղեցիկ կանանց ու աղջիկների /ի դեպ, Մուսիմի կոհվեցին ժամանակ Արանց գերությունից ազատեցին հայերը/: Հայերը տվին 2 սպանված և 5 վիրավոր /8/:

Մայիսի 3-ին և 4-ին համար մարտեր տեղի ունեցան հայկական Մուղրութ, Միրա և հունական Միքելծմինդա գյուղերի մոտ: Թուրքերը մեծ ուժերով միաժամանակ հարձակվելով՝ ստիպեցին այս երեք փոքր գյուղերի բնակիչներին հեռանալ իրենց գյուղերից և ապաստան գտնել քաղաքուն: Այս գյուղացիները նախօրոք իրենց անառուներն ու գույքը տեղափոխել էին քաղաք, որովհետև ի վիճակի չեին երկար դիմադրել՝ քաղաքից հեռու գտնվելու պատճառով: Թուրքերի կողմից այս գյուղերը հրդեհվեցին:

7. Դիմածշվիլի, օրագիր, նաև «Ծառծուն», 1918թ., հար. 26:

8. «Ծառծուն», 1918թ., հար. 27: Գիշմամշվիլի, օրագիր:

Ախալցխայի գավառում հայ-վրացական փայլուն համագործակցության էջերից է նաև Մուսիմի արշավանքը, որը տեղի ունեցավ Մայիսի 2-ին: Վրացական Մուսիմի գյուղը գտնվում էր թուրքական տասնյակ գյուղերի շրջապատման մեջ և ամփոփել շարունակ հաջողությամբ պաշտպանվում էր: Մական մեծարանակ թշնամիների ավելացող ննջան տակ մուսիմները ևս կարծանամային ճամարակցիների, գորգելցիների և տասից ավելի այն վրացական գյուղերի բնակիչների ճակատագրին, որոնք գավառի արևելյան մասում էին և տասնյակ կիլոմետրեր հեռու էին գտնվում քաղաքից:

Սյոյ գյուղերի/Մուսիմներ, Լագ, Մինդա, Զվելի-Կորա, Գադեշ, Կունցա, Մոգեթ, Թորք, Թուլոշ, Էլնա/ վրա հարձակվելով՝ այրել էին, զինաթափել ու կոտորել բնակչությամբ, բռնարարել կանաց ու աղջիկներին, կատարել այլնայլ սոսկալի բռնություններ...»

Մուսիմը ազատելու համար վրացական գումարտակի վաշտերը և քաղաքի ինքնապաշտպանության հայկական խմբերը, գեներալ Մահաշվիլու ընդհանուր հրամանատարությամբ, մայիսի 2-ին շարժվեցին դեպի արևելք: Գորքերը անունը է անցնելու բազմաթիվ թուրքական զինված ու պատրաստ գյուղերի մոտով, որը խիստ դժվարացնելու էր նրանց գործը: Գրա համար արշավանքին մասնակցում էին նաև հայկական գյուղերի զինված ուժերը՝ աջ քենից: Մայիսի 3-ին առավոտյան վաղ թնդանոթների ու հրացաների համագործերը որոտացին Ուրավելի հովտում: Քաղաքի ինքնապաշտպանության խմբերի և վրացական գումարտակի վաշտերի շղթաները թնդանոթների պաշտպանության տակ շարժվեցին Ուրավելի և Մուսիմի ուղղությամբ: Ինքնապաշտպանության խմբերը Ուրավելչայի մոտ հասնելով՝ ամրացան այնտեղ և պաշտպանեցին դեպի Մուսիմ շարժվող վրաց զինվորների թիկունքը: Վրացիները հասնելով Մուսիմ և իրենց հետ վերցնելով գյուղի զինված ուժերը՝ արշավանքը շարունակեցին Ծաճարակի և Զորգելի ուղղությամբ և փակեցին թուրքերի ճանապարհը, որպեսզի մուսիմներին ու նրանց ինչըք կարողանան անվտանգ տեղափոխել դեպի Անդրեծմինդա, Սաֆարա և Ղուլ գյուղերը: Մազմաճակատի աջ քենի, ինչպես ասվեց, շարժվում էին հայկական գյուղերի զինված ուժերը, որոնք պարտության մատնելով բազմաթիվ թուրքական գյուղերի զինվորականությանը՝ առաջանում էին մեծ հաջողությամբ և ապահովում հիմնական ուժերի աջ քենի

ամփոփանգությունը: Հայ-վրացական ուժերին հաջողվեց իրականացնել Մուսի ազատագրումը: Այս մարտերում զոհվեց միայն վրացական գումարտակի խիզախ սպա Զետգինիձեն՝ Զվելի գուղից: Նրա հուղարկավորությունը նույնական վերածվեց համաժողովրդական սգո համբեսի:

Տավոր պետք է ամել, որ Մուսիի հաջողությունը չգարօնացավ՝ բորբական կանոնավոր գործերի գավառում հայտնվելու պատճառով:

Ընորհիվ հայերի և վրացիների եղբայրական ու ամկեղծ համագործակցության, հերոսական ու խնդացի կազմակերպած ինքնապաշտպանության՝ Ախալցխայի գավառի հայ և վրացի բնակչությունը պաշտպանեց իր գոյությունը, հիմնականում շրջնեց գաղթի ճանապարհը, որի անասելի ծանր հետևանքները գոնե հայերին հայտնի են: Օրինակ՝ հարևան Ախալցխայի գավառի 80000 գաղթականներից կես տարվա ընթացքում գաղթավայրերում սովոր ու համաճարակից գոնվեց 40 հազարը...

Հնայած հումքի սկզբներին վրաց մենշևիկները Ախալցխայի գավառը հարկադրաբար գիշեցին Թուրքիային, այնունից հայերն ու վրացիները շինուացան, որովհետև բարբարոս նվաճողներն անգամ ստիպված են տեղի հայ և վրացի քաջարի բնակչության հետ վարվել քավականին գգուց և հաշվի նորել հրաց հնտ...

Ախալցխայի ինքնապաշտպանությունը. Ախալցխայի 1917թ.

Յօր տնելի ունեցած ղեպերը / տեղական թուրքերի կողմից 15 հազար զորք քաղաքի շրջապատումը / տագնապ առաջացրին նաև Ախալցխայի գալաքուն, որտեղ ապրում էին նաև մեծաթիվ թուրքեր: Մահմեդականների 24 գուղերը հիմնականում կենտրոնացած էին գավառի հարավ-արևմտյան մասում՝ Քու գետի աջ ափին, Խրթվիսի և Կարծախի գյուղական հասարակություններում, Ախալցխայի գավառի թուրքերի անմիջական հարեանությամբ, և պատրաստ էին հրաց, ինչպես նաև Շըլիրի / Զարիշատ / և Աղբաբյա / այժմ՝ Ամասիայի շրջան / թուրքերի հետ հարձակվել Ախալցխայի հայության / նաև վրացիների / վրա:

Զավախրցիներն անհանգստացած էին ոչ միայն այս պատճառով: Նրանց միշտ մտահոգում էր նաև Ախալցխայի գավառի իրենց արյունակից եղբայրների անասելի ծանր վիճակը:

Ախալցխայի գավառի ղեկավարությունն սկսեց ձեռք առնել մի շաբթ միջոցառումներ՝ ի պաշտպանություն Ախալցխայի՝ շրջապատման մեջ գտնվող հայության և վրացիների: Այս իրադարձությունների կապանցությամբ Ախալցխայ քաղաքում ղեկենքերի 27-ին քաղաքագույն Մ.Մարգարյանի նախագահությամբ տեղի ունեցավ բազմամարդ միտինգ: Այստեղ ճարտասանների ոգևորիչ հայրենասիրական ճառներից հետո որոշվեց ազգի համար ճակատագրական այդ պահին կոչ ամել ամրող աշխարհի հայերին՝ համախմբվել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի շուրջ: Կոչ արվեց ուրի ելեն՝ կյանքի գնիվ պաշտպանելու ազգի պատիվը, նրա գոյությունը և բարձրացնել հայրենիքի փրկության սրբազն դրոշը: Ինչպես տեղեկանում ենք 1917թ. դեկտեմբերի 51-ի և 1918թ. հունվարի 2-ի Թիֆլիսի Հայկական ազգային խորհրդին Ախալցխայի գավառի պաշտպանության կոմիտեի նախագահ Մ.Մարգարյանի հղած հեռագրերից, գավառում այդ օրերին ստեղծված եր պաշտպանության ժամանակավոր կոմիտե:

Վերոհիշյալ հեռագրերից պարզվում է նաև, որ գավառի հայ երիտասարդությունը ինքնապաշտպանության նախանասիրության և ազգի առաջ պատասխանատվության վեհ զգացումով տոգորված, հոծ մասսաներով գյուղերից գալիս էր Ախալցխայ և մտնում այնտեղ ստեղծվող հայկական ազգային գորամասի շարքերը: Այդ հայրենասեր տղաների թիվը կարող էր հասնել մի քանի հազարի:

Խանդական երիտասարդությանը հարկավոր էր գենք ու հանդերձանք: Դրանց պակասը շատ էր անհանգստացնում գավառի պաշտպանության

կոսիրեհը: Ի տարբերություն Ախալցխայի ոռուական կայազորի, որը հեռանդուց հետո տեղացիներին թողեց իր զենքն ու զինամթերքը /հատկապես հրետանին/ այսուհետ կայազորը կազմացրվելով՝ իր հետ տանում էր ամեն ինչ:

Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդը աշակցում էր Զավախիքի հայկական գնդի ստեղծմանը, սակայն նրա հնարավորությունները սահմանափակ էին, ինչի մասին ասում է հենց այն փաստը, որ գունդը կազմավորելու համար գավառ ուղարկեցին միայն մեկ փոխգնուազնուի/գնդի հրամանատար Առաքելովին/ և 10-15 ցածրատիման սպաների, համեմածանը՝ 1200 զինվորի համար, 550 նրացան և 6600 փամփուշ, 4 անդաշիո: Ընդամենը այսքանը՝ 2000 զինվորից բաղկացած գնդի համար: Դա, իհարկե, անշատ քիչ էր, որը և հետագայում, ինչպես կտևմենը, իր խիստ բացասական ազդեցությունն ունեցավ՝ գավառի հերձապաշտանության գործի վրա: Հայ կամագորենը մեծամասնը ծառայել էին ցարական բանակի շարություն, կույր տարրեր ու ուղամաճականներում և հմտու զինվորներ էին: Նրանց մեծ մասը կրում էր ուղամաճականից իր հետ քերած զենքը:

Բացի այս կամագորական գնդից, 1918թ. հունվարին թուրքական գյուղախմբերին սահմանակից հայկական և վրացական գյուղերում տուղթվում էին ինքնապաշտանական խմբեր: Առաջինը զինվեցին Գամալյա գյուղի բանկիչները՝ մի քաջարի երիտասարդի՝ Մատո /Մարտիրոս/ Սահմանական գլխավորությամբ: Ստեղծվեց 250 հոգուց բաղկացած վաշտ: Գյուղը մտնում էր Ախալցխայի գավառի մեջ, սակայն այն, քաղաքից հեռու լինելով 33 վերսա և շրջապատված թուրքական 20 գյուղերով, աշակցություն էր ստանում Ախալցխայից, որի սահմաններին մոտ էր գտնվում: Գյուղի հայ քաջերը, որոնք իրենց համեմատում էին զեյթունցիների հետ, վեց ամիս առնվելով շրջապատման օղակի մեջ, կովկասին խկանան առյուծների պես՝ հավատարին մնալով «գերություն» կոչմանը: Իր քաջորությամբ աշքը ընկավ խմբավոր Առաք Պետրոսյանը, որն իր 19 Կորիճներով կոփվներից մեկի ժամանակ՝ 1918թ. ապրիլի 4-ին, պարտության մատնեց 300 հոգուց բաղկացած թուրքական հրոսակախմբին՝ Յ. Ժամ տեած մարտի ընթացքում սպանելով 8-ին և վիրավորելով 5-ին, տալով մեկ զոհ միայն:

Կոփվներում աշքի ընկամ նաև խմբակուն Պարա-Մատոն և իր երիտասարդ կինը: Ախալցխայի գավառում առաջինը զինվեցին Ազանվեր և Ալատան հայկական գյուղերը: Ալատանում 300 հոգուց բաղկացած կամագորական խումբ ստեղծվեց Պետրոս /Պետրու/ Շաորիմյանի գլխավորությամբ:

Վրացական Խիզարավրա և Սարո գյուղերում ստեղծվեց ինքնապաշտանական «հազարյակ»՝ Ալեքսանդրե Խուցիշվիլու գլխավորությամբ՝ գավառի վրացական գյուղերի երիտասարդներից: Այն բաժանվեց չորս «հարյուրյակի»: «Հազարյակը» լավ էր զինված: Հրացաններից բացի ունեին բավականաչափ զեղացիրներ և 4 թնդանոր: Հետագայում, երբ Թուրքիան 1918թ. փետրվարի 12-ին, խախտելմվ 1917թ. դեկտեմբերի 5օհն Երգեցկայում Կերպած զինադադարը, անցավ հարձակման, Ախալցխայի մոտ գյուղերում և ստեղծվեցին ինքնապաշտանական ուժեր: Այս պրոցեսն ավելի արագացավ, երբ տեղական /Ախալցխայի և Ախալքալաքի/ թուրքերը թուրքական բանակի հարձակման հետ միաժամանակ սկսեցին հարձակվել Ախալցխայի գավառի արևելյան մասի վրացական գյուղերի վա և ավերեցին ու բալանեցին, կոտորեցին բանկությանը, բռնարարեցին կանաց: Այդ դեպքերը տեղի ունեցան փետրվարի 14-15-ին: Ախալքալաքի հայկական գյուղերի բնակչները անտարբեր չէին կարող մնալ իրենց եղբայրների այդ ծանր վիճակի նկատմամբ: 800 զինված հայեր, հակածարված տանը թուրքերին, նրանց հիբաններից ազատեցին վրացիների ունեցվածը և ամենագիշավորը՝ գերված կանաց ու երեխաններին: Օգնության հասած հայնրի շնորհիվ շրջապատումից ազատվեցին նաև Ախալքալաքի գավառի վրացական Սարո և Խիզարավրա գյուղերը: Փետրվարի 15-ին վերոնիշվալ վրացական գյուղերից 300 գյուղացիներ Ախալքալաք գալով՝ երախտիք ու շնորհակալություն էին հայտնում հայ եղբայրներին՝ իրենց փրկելու համար: Նրանք դիմելով Ախալքալաքի հայոց ազգային խորհրդին, խնդրում են այնունենակ և իր պաշտպանության տակ առնել վրացական գյուղերը կամ թույլ տալ բնակչությանը՝ վերաբնակվել հայկական գյուղերում:

Միջազգային դրությունը հայերի ու վրացիների համար անբարենպատ էր: Մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանը ստիպված ստորագրեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Այդ պայմանագրի համաձայն ուստական գործերը պետք է դուրս գային Արդահանի, Կարսի ու Բարումի օկրուգներից/այդ բանն արդեն տեղի էր ունեցել հունվարին/:

Անդրկովկասի Սեյմը, հրաժարվելով Բրեստի պայմանագիրը ճանաչելուց, մարտի 1-ին /14-ին/ Տրավիզոնում Թուրքիայի հետ սկսեց անշատ բանակցություններ՝ «պատվավոր» հաշտություն կնքելու համար: Սակայն սեյմի պատվիրակությունը /Ա. Զինենկելի, Հ. Քաջանունի, Ալ. Խատիսյան, Լեռ/ քննականարար, ձեռնունայն վերադարձավ:

Թուրքիան, ունենալով ուղամական և դիվանագիտական առավելություններ հայերի և վրացիների նկատմամբ, շարունակում էր առաջ

շարժվել դեպի Անդրկովկասի խորքերը: Ինչպես գիտեմ, օսմանյան թուրքերը մեծ աջակցություն էին ստանում այդ ընթացքում Անդրկովկասի իրենց արյունակից-հավատակիցներից, որոնք կատարելով «5-րդ շարասյան» իրենց դերը, թիկունքից հարվածում էին հայերին ու վրացիներին: Ախալցխան պաշարման մեջ էր, իսկ Ախալցալարի գլխին կուտակվում էին և ամանը: Ախալցխանի արևելյան շրջանների, Ախալցալարի, Չըլդըրի բուրքերը, մինչև ատամեները զինված, հարձակվել էին գավառի հարավ-արևելյան շրջանում թուրքական գուղերով շրջապատված Կարծախ, Մրակու հայկական գուղերի վրա: Կարծախիները Գրիգոր Մնոյանի /Բաղդասարյան/ և Բագրատ Միքայելյանի հրամանատարությամբ կովում էին արիարար:Կարծախիների կորուստները շնչին էին Յ Վիրավոր, իսկ թշնամիներին՝ անհամեմատ շատ: Աղբարափ թրությունը, որը դամոկյան սրի պես կախված էր հայերի գլխին, նույնական սպասում էր համար պահի, ուստանելու համար: Նրանց ներկայացուցիչները մարտ ամսին օգնություն խնդրելու համար Աւերսանդրապուրում գտնվող ախալցալաքցիների պատվիրակությանը ,պատկերավոր արտահայտությամբ, բնաշնչման սպանմալիք են անում.«Այս լեռների ձևան տեսղության չափով միայն դուք կյանք կունենաք»;/⁹

Արդարանի հայ բնակչությունը գազանարար սրի էր քաշվել: Հրաշըն կենածի մնացած փախստականները/բռնարարված, ամբողջովին թալանված կանայք ու երեխաններ/ դեռ չեն համել Ախալցալար, որոնց կյանքն ապահովելու համար գավառի հայոց ազգային խորհուրդը դիմել էր Ախալցխանի գավառի թուրք թէվերին: Թուրքական Կոկիա գյուղի զինված ուժերը հաճախակի հարձակվում էին գյուղի մոտով անցնող հայ զինվորների վրա:

Այս հաճախանքները լցրին բրիստոնյանների՝ հայերի և վրացիների համբերության բաժանը: Նրանք հազար զինյալ մարդկանցով հարձակվեցին Կոկիայի, ինչպես և մի շարք այլ թուրքական գուղերի վրա: Կոկիայի տղամարդիկ փախան Չըլդըր, իսկ կանայք ու երեխանները գերվեցին և տեղավորվեցին Ալաւտան գյուղում, որի բնակիչները նրանց, ինչպես նաև այլ գյուղերի թուրք գերիների հետ վարվում էին հային հատուկ մեծահոգությամբ:Ենք ապրիլի 9-ին Սարո գյուղի մոտ այդ գերիներին փոխանակեցին Արդարանից գաղթած 1500 հոշտված, բզեսված, սոված հիմար հայերի հետ, մերոնցից մեկը նույնիսկ կատակեց՝ կշիռով փոխանակենք:

Այդ օրերին նորանոր հայկական գյուղեր էին զինվում դիմում ինքնապաշտպանության: Սովորայում ստեղծված ինքնապաշտպանական խումբը Եղիազար Արգարյանի /Սարխան գյուղի բրոյաներից էր/ գլխավորությամբ օգնության հասավ Կարծախին և Միաժամաւակ պաշտպանվում էր թուրքական Խավեր, Դավիթ, Էրինչա, Մղարիստան, Հոգամ գյուղերի հարձակումներից: Այս գյուղերի զինյալ ուժերը հարձակվում էին նաև Վաշիս հայկական գյուղի վրա: Գյուղում Աշոտ Տեր-Սիմոնյանի գլխավորությամբ ստեղծվեց 300 հոգուց բաղկացած ջոկատ: Ինչպես պատմում է ականատես Լեռն Զաքարյանը, զինյալներին առաջին մարտին տարավ Շողան անունով Սարխանի մի երիտասարդ կին՝ Եղանը ձեռքին: Գավառի այս հարավ-արևմտյան հատվածում փոխադարձ հաջողություններով էին շարունակվում ոազմական գործողությունները:

Զատկի տոնակատարության օրերին Քուո գետի ձախ ափի/Ախալցխանի գավառի/ թուրքերը մեծ ուժերով հարձակվելով վրացական Զենաթմոցի/գտնվում է Վարձիս նշանավոր պատմական հուշարձանի մոտ / և Ազգարա գյուղերի վրա՝ ստիպեցին նրանց տեղահան լինել և շարժել դեպի Քուո գետը, անցնելու աշ ափը, սակայն հրանց ճանապարհը փակել էին Քուո գետի աշ ափին գտնվող Մարգաստան և Նաքալաք գյուղերի քրդերը, և սպասվում էր վրացիների լրիկ ոչնչացում:

Ահա այդ դժվարին պահին էր, որ վրաց եղբայրներին օգնության համար հայկական Գյումբուրդա մեծ գյուղի պաշտպանները: Այս գյուղի բնակչիները միշտ աշի են ընկել իրենց խիզախությամբ ու ասպետականությամբ, որոնք դեռևս ձմռանը Զարմար Խանոյանի գլխավորությամբ ստեղծել էին իրենց 300 հոգուց բաղկացած զինված խումբը և մեծ հաջողությամբ պաշտպանվում էին և պաշտպանում հարևան վրացական փոքր գյուղերի /Գիլդա, Չորչնել, Գոգաշեն, Ափնիա/ բնակչությանը: Մարտի կեսերին, ինչպես գրում է «Հորիզոնը», երբ վրացական Գոգաշեն գյուղի մարդիկ Թիֆլիսից գենք են բերում/35 հրացան և 5250 փամիուշ/ և անցնում թուրքական Ցանկալ գյուղով՝ տանկարգիները խլում են նրանց ձեռքից: Կրակոցների ձայնը լսելով, Գյումբուրդացիները հասնում են դեպքի վայրը և գենքը վերադանում գոգաշենցիներից:¹⁰

Այս անգամ էլ լսելով, որ գեղա-թմոգվների և ազարացիների վիճակն օրինական է, նրանք գրունցին Նաքալաքին և Մարգաստանի մուսուլմանների վրա, տեղահան արեցին, քեցին Քուո գետի ձախ ափը և այն ափից

9«Հայաց», 1910թ., հնր. 14:

10«Հորիզոն», 1918թ., հնր. 66:

ազգատագրված վրացիներին բերին բնակեցրին վրացական Քիլդա և Զուրչխել գյուղներում:

Եթե ապրիլի 9-ին/22-ին/ Անդրկովկասյան սեյսմ իրեն անկախ հոչակեց, դրանով փաստորեն ազատ արձակեց Թուրքիայի ճնորքը, որի համար արդեն 1877թ. սահմանի արորելնը ի շիր դարձավ: Մնացած թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ Փաշայի համար, մարզական լեզվով ասած, տեխնիկայի հարց էր, որին էլ նա հմտորեն էր տիրապետում:

Թուրքերն ապրիլին նեշտությամբ գրավեցին Սարիսամիջը, Բաթումը և Կարսը: Վերջինս գրավեց գրեթե առանց կովի՝ Անդրկովկասյան կառավարության գլուխ կանգնած մննչելի պարագլուխների դավաճանության հետևանքով: Այս հանգամանքներում Ախալցխայի և Ախալքալաքի գավառների հայության և վրացիների վիճակն ավելի ծանրացավ: Տեղական թուրքերն իրենց «մեծ եղբար» բազմակողմանի աշակցությամբ նգորացած ու ոգևորված նորանոր չարիքներ ու ոճիրներ էին գործում: Այսպես, Խըրքը/Խերքիս/ գյուղական հասարակության թուրքերը մայիսի 7-ին/ապրիլի 25-ին/ հարձակվեցին վրացական Սարո, Խիջարավրա գյուղերի վրա: Վրաց բաշորդիները կասեցրին թշնամու առաջանացումը: Այդ ժամանակ թշնամու թիկունքից հարվածեցին Գյումրութողի, Դիլիխայի հայերը: Խերքիսի թուրքեր երեք կողմից շրջապատվեցին և հիմքորյա դաժան մարտերից հետո ոչ միայն թողին Սարո գյուղի պաշարումը, այլև, տալով հսկայական կորուսներ, լքնեցին իրենց գյուղերն ու փախան Քուրի ձախ ափը: Գյումրութացիներն այս փայլուն հալթաճակից հետո պարտության մատնեցին նաև Հոգամի թուրքերին և տեղահան արեցին նրանց: Հայերն ու վրացիները թուրքերի դեմ փայլուն հալթաճակ տարան նաև Ասպիճաձայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում:

Ինարկե, այս և մյուս հալթաճակներն ունեին տեղական նշանակություն, իսկ ընդհանուր ուղղմանակատում դրույթամ դերը Թուրքիան էր, որը սողալով առաջ էր շարժվում:

Թուրքական բանակները 1918թ. մայիսի 15-ին, համարյա առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին նաև Ալեքսանդրապոլը: Այդ ընթացքուն Վեհիբ Փաշան մտադիր էր դեպի Բարոյ և Երևան արշավելիս ապահով թիկունք ունենալու համար լուծել նաև Ախալքալաքի հարցը: Նրա ուղարկած կանոնավոր գորքերը մայիսի 7-ին Զբլորի թուրքերի հետ հարձակվեցին Կարծախի վրա: Այդ ժամանակ Կարծախ և Սոլդա գյուղերում էր գտնվում Ախալքալաքի գումարը: Թշնամին զգալով, որ պաշտպանների զգուշությունը թուլացած է, գիշերային գրոհով հանկարծակի բնեց նրանց և գրավեց Կարծախի բարձունքներին տեղադրված երկու թնդանոթները: Վաղ առավոտյան

«ուշի նկած» հայկական զորքերը ցուց տվեցին համար դիմադրություն: Կովեցին մինչև վերջին փամփուշտը/այնքան քիչ էր, որ երկու օր հազիվ ենթիքնց /: Մայիսի 8-ին/21-ին /մեր զորքերը ստիպված նահանջեցին:

Թուրքերը մնձ ուժերով հարձակվեցին գավառի հարավ-արևելյան հատվածի Սարիսայի գյուղական հասարակության գյուղերի վրա: Մեծ խանչալի գյուղի մոտ տեղի ունեցավ ճակամարտ: Մեծխանչալեցիներին օգնության հասած Սարիսայի գինված ուժերը Հ.Խանոյանի և Գ.Սուրբիայանի հրամանատարությամբ փայլուն հաղթանակ տարան թշնամու դեմ և ստիպեցին նրան նահանջել 1877թ. սահմանից այն կողմ: Թշնամին տվեց բազմաթիվ կորուսներ՝ սպանված, վիրավոր, գերի:

Մայիսի 8-ին Սարիսայի 220 հոգուց բաղկացած կանոնավոր զորքին միացավ Կարծախից նահանջած հայկական գնդի այն վաշտը, որը կազմված էր Սարիսայի գյուղական հասարակության գյուղերի/Սարիսա, Խոջաբեկ, Օրոշալար, Մեծ Արագյալ, Փոքր Արագյալ, Գանձա, Փոկա/ բաշորդիներից: Վաշտն իր հետ բնեց թնդանոր և գնդացիր: Վաշտի հրամանատարն էր սարիսացի սպա Ստեփան Կոպալյանը:

Վերջապես, մայիսի 13-ին/26-ին/, Սարիսայի վրա ոստնեց Աղբարան՝ թուրքական բազմաթիվ կանոնավոր զորքերի հետ: Առավոտից մինչև երեկո տևած ճակատամարտն ավարտվեց Սարիսայի հաղթանակով: Թշնամին, բազմաթիվ կորուսներ տալով փախակ իր որչը: Սարիսայի այս փառանեղ հաղթանակների շնորհիվ էր, որ Զբլորի թրբությունը թուրքական կանոնավոր զորքերի հետ սիրտ չէր անում Կարծախից առաջ շարժվել դեպի գավառի խորքերը:

Թուրքական զորքերի հրամանատարությունը այնքան մնձ նշանակություն էր տալիս Ախալքալաքի գրավմանը, որ Թիֆլիսի գրավման համար նախապատրաստ 5-րդ դիվիզիոնից, որը գտնվում էր Լոռիում, հանեց մի գորամաս և բազմամրու թուրք և բուրդ բաշիրողուների ուղևությամբ մայիսի 17-ին/30-ին/ ուղարկեց Սարիսայի դեմ: Մայիսի 18-ի/31-ի/ առավոտյան ժամը 4-ից անձրևի ու ձամ տակ սկսվեց մի անհավասար ու անհավոր ճակատամարտ, որը տևեց մինչև ուշ երեկո: Հայ բաշերը չերկնչեցին թշնամու բազմաբանակ, կանոնավոր ու մինչև ատամները գինված զորքերի առաջ: Հայրենասիրության, բաշության, զայրույթի ու ցասման, արժանապատվության զգացմունքներով էր համակվել ամբողջ գյուղի բնակչությունը՝ 3250 մարդ: Ժողովուրդը 17-ի երեկոյան ազգային խորհրդի հետ որոշել էր մնալ ամբողջ գյուղով և կովել մինչև վերջին մարդը: Որոշումը դաժան էր, բայց արժանապատվությամբ մեռներ սարիսացին գերադասում էր

РЕЗЮМЕ

САНОСЯН А. С.

Самооборона Ахалцихского и Амаликанского уездов в 1918-
году

Աւորկական կյանքից: Բայց երեկոյան, երբ արդեն սպառվում էր ռազմամթերքը, ազգային խորհուրդը որոշեց գաղթեցնել կանանց ու երեխաներին, որոնց նորդացած Թափարվան գևոն անցնելուց հետո Միայն այրեքը հնուացան՝ մեծ ախտամարդու լրելով դիրքերը...

Երկուստեղ մեծ թվով զոհեր տվեցին: Գերիների վկայության համաձայն՝ թուրքերի զոհերի թիվը ավելի մեծ էր, քան մերոնցը:

Թուրքական գործը շարժեց Ախալքալաք: Մաշատիա գյուղի մոտ, գևոնի ափին մայիսի 19-ին/հունիսի 1-ին/ դիրքեր բռնած հայկական գնդի գննվորները, գյումբուրդացները և մյուս գյուղերի գինված ուժերը չկարողացան դիմանալ թշնամու գրոհն և նահանջեցին դեպի Բակուրիան և Ծալկա...

Առնախոսության հիմնական բովանդակությունը, դրույթերը շարադրված են նեղինակի նետելալ հրապարակումների մեջ:

Մեմագրություն՝

Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, ճր. «Հայաստան», 1992թ.:

Հողվածներ՝

1.Սարիս գյուղի 1918թ. ինքնապաշտպանության մասին, «Բաներ Հայաստանի արխիվների», 1986թ., հմր.1:

Ныне, когда продолжается национально-освободительное движение в Арцахе, очень актуально данное исследование, цель которого изложить историю самообороны армянского населения Ахалцихского и Амаликанского уездов в 1918г.

Работа состоит из двух глав: первой (Ахалцихское геройское сражение в 1918 году) и второй (Амаликанская самооборона в 1918 году).

В 1917г., 5-го декабря, заключив перемирие в Ереване, российское большевистское правительство вывело российские войска с фронта, последствием чего и явилось продвижение турецкой армии в Закавказье. Одновременно Турция подняла против закавказского комиссариата (Сеяма) турецкое население этого региона.

В первой главе рассказывается о том, как турки Ахалцихского уезда хотели создать там автономию, по побуждениям Турецкого правительства и Тифлисского национально-мусульманского совета, окружили горы Ахалцих. Однако армянское население, во главе с мэром Вори Боряном, вместе с населением армянских и грузинских деревень, находясь в изоляции в кольце блокады, героически сражались. Они имели ряд блестящих побед и сдались Османской Турции лишь по решению Грузинского правительства...

Во второй главе рассказывается о том, как в это же время также вооружалось население Амаликанского уезда, 76% которого составляли армяне. Несмотря на ряд блестящих побед армянского населения Амаликанского уезда против местных турок и османской регулярной армии, Амаликанский полк и сельские отряды по неизвестности Зекендерисского Сейма, в результате беспорядки уездных властей, потерпели поражение.

жения в 1918-ом году 7-го и 8-го (20-21) мая вблизи села Кацах
и 18 мая, вблизи села Сатка.

80 тысяч армян переселились в леса Бакуриани и в Цалку. Меньшевистское Правительство Грузии не разрешило им продвигаться вглубь страны, вследствием чего и явилась смерть 40 тысяч армян от голода и эпидемии.

Подписано к печати 18.07.96 г. формат бумаги 60 x 34 I/16
1,0 печ.л. Зак. 132 Тираж 70

Типография АрмСХА ул. Теряна 74